

7529

399.14

m-18

1932

2010

Թ Ր Ա Գ Ի Ր

ԵՒ

(26)

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԹԱՄԿՅՎԱՐ ԱԶՅԱԿԵՆ  
ԿՈՒՍԾԿՑՈՒԹԵԸՆ



Բ Բ 2001

Տպարան «Պայման»  
Պուրուն  
1982

329.14  
Բ-18

**Թ Ր Ա Գ Ի Ւ**

ԵՒ

**ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ**

**ՊԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ**



Տպարան «Պայֆար»ի  
Պուրուն  
1932



329/4

Դ-18


ՅԱՌԱԶԱԲԱՆ

Ուամկավար Ազատական Կուսակցութեան  
Ծրագիրը հասարակութեան ներկայացնելու ա-  
ռիթով՝ կ'ուզենք մէկ ժամկի բառերու մէջ խը-  
տացնել ուամկավարական կարգուսարքերու եւ  
ժողովուրդի վեհապետութեան ըմբռնումին  
վրայ հիմնուած այս կուսակցութեան աշխար-  
հահայեցքն ու ուղղութիւնը :

Ազգին անհատականութիւնն ու անոր օ-  
րինաւոր շահերն ու իրաւունքները պաշտպա-  
նելու գործումը՝ ուրիշ ժողովուրդներու իրա-  
ւունքներուն եւ շահերուն հանդէպ տածուած  
յարգանքին հետ կը բնորոշեն այս կուսակցու-  
թեան ազգայնականութիւնը :

Ազատականութեան մէջ կ'ըմբռնուին ան-  
հատներու եւ հաւաքականութիւններու ֆիզի-  
քական, մտաւորական եւ բարոյական կարո-  
ղութիւններու ազատ կիրարկման իրաւունք-  
ներն ու Հայ հայրենիքի ժամանական եւ տրն-  
տեսական պայմաններուն պատշաճ եւ անոնց  
մղում տուող ամէն տեսակ նոր եւ յառաջդի-  
մական գաղափարներ որդեգրելու պատրաստա-  
կամութիւնը :

Քաղաքական, տնտեսական բնակչութեարային  
բարեփոխութիւնները, բարեշրջման (evolu-  
tion) եղանակով



80283 օւժ  
1683-X

ԾՐԱԳԻՐ

Ո.Ա.ՄԿԱՎ.ԱՐ Ա.ԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿ

Ուամկավար Ազատական Կուսակցութեան  
նպատակն է՝

Ա. — Ժողովրդային կամքի գերիշանու-  
թիւնը եւ ուամկավար ազատական սկզբունքնե-  
րու կիրարկումը Հայ պետական եւ հանրային  
կեանքին մէջ :

Բ. — Հայաստանի պետութեան դարպա-  
ցումն ու բարգաւաճումը :

Գ. — Արտասահմանի Հայ զանգուածնե-  
րուն հայրենի հողի վրայ հաւաքումը :

Դ. — Հայոց Թուրքիոյ մէջ ունեցած էրա-  
ւունքներուն եւ շահերուն հետապնդումը :

Ե. — Հայաստանի եւ Գաղութներու միջեւ  
յարարերութեանց ամրապնդումը :

Զ. — Գաղութներու ֆիզիքական եւ արե-  
սեսական զարգացումն ու անոնց մէջ Հայկա-  
կան մշակոյթի պահպանումն ու զօրացումը :

ԳԼՈՒԽ Ա.

Քաղաքական Սկզբունքներ

Յօդուած 1. — Կուսակցութիւնը հիմնուած  
է քաղաքացիական իրաւունքներու հաւասա-  
րութեան սկզբունքին վրայ եւ չի ձանչնար  
դասակարգային ունէ առանձնաշնորհում :

Յօդ. 2.— Հայաստանի կառավարութեան ձեւ կընդունուի Ռամքավարական Հանրապետութիւնը, Օրէնսդրական, Դատարանական և Գործադիր Իշխանութեանց բաժանումներով։

### ԳԼՈՒԽ Բ

Սահմանադրական Երաշխաւորութիւններ

Յօդ. 3.— Ամէն քաղաքացի բացարձակապէս հաւասար է օրէնքի առջեւ։

Յօդ. 4.— Ամէն քաղաքացի կը վայելէ քուէարկութեան հաւասար իրաւունք 20 տարեկանն սկսեալ, առանց սեռի խորութեան։

Յօդ. 5.— Ներկայացուցչական բոլոր մարմիններու ընտրութիւնը կը կատարուի ընդհանուր, հաւասար, ուղղակի եւ գաղտնի քուէարկութեամբ։

Յօդ. 6.— Զինուորական կրթութիւնը պարտաւորիչ է Հայաստանի մէջ։

Յօդ. 7.— Հայերէնը պետական պաշտօնական լեզուն է։ Փոքրամասնութեանց մասկութային տեսակէտով՝ ինքնուրոյն դիմադիծը կը ճանչընուի։

Յօդ. 8.— Նախակրթութիւնը ընդհանուր, ձրի եւ պարտաւորիչ է։ Երկրորդական եւ համալսարանական կրթութեան համար պետութեան կողմէ կը հայթայթուին դիւրութիւններ ընդունակ աշակերտաներուն։

Յօդ. 9.— Ազատութիւն խօսքի, մամուլի, խնդրագրի (petition), հանրագրութեան, հա-

ւագումներու, ընկերակցութեան եւ ճամբորդութեան։

Յօդ. 10.— Ազատութիւն խղճի, կրօնքի եւ պաշտամունքի։

Յօդ. 11.— Անձեռնմխելիութիւն անձի, անրոնաբարելիութիւն բնակարանի, ստացուածքի եւ նամակի։

Յօդ. 12.— Վարչական ապակեղբոնացում պետութեան հիմնական օրէնքներուն համաձայն։

### ԳԼՈՒԽ Գ

Ընկերային եւ Տնտեսական Ազգբունքներ

Յօդ. 13.— Սեփականութեան իրաւունքը կը նկատուի իրբեւ արդար վայելումը աշխատանքի եւ խնայողութեան արդինքին։ Ժառանգական իրաւունքը կը յարգուի որոշ սեղմումներով եւ հարկային պարտադրութեամբ՝ ի նպաստ պետութեան։

Յօդ. 14.— Անհատական ձեռներէցութիւնը կը քաջալերուի իրբեւ խթան յառաջդիմութեան եւ անհատին ու համայնքին վիճակին բարելաւման։ Զարգացման հաւասար պատեհութիւն կը տրուի բոլոր քաղաքացիներուն համար։

Յօդ. 15.— Ընտանիքը կը նկատուի հիմնկերութեան եւ օրէնքով կը սահմանաւորուին ամուսնութեան, այլ-կնոջ փոխադարձ իրաւունքներուն եւ պարտականութեանց, զաւակ-

ներուն հանդէս անոնց պարտաւորութեանց եւ ընտանեկան ստացուածքի սեփականութեան խողիբները :

Յօլ. 16.— Բոլոր քաղաքացիներուն կ'ապահովուի արդարութեան գործադրութիւնը պետութեան ընկերային եւ տնտեսական կեանքին մէջ :

Յօլ. 17.— Հիմնարկութիւն պետական եւ վարկային զբաժառուներու՝ ընծայելու համար դիւրամատչելի վարկ քաղաքացիներուն :

Յօլ. 18.— Կանոնաւորում՝ օրէնսդրական միջոցներով՝ աշխատութեան եւ զբաժառուի փոխադարձ յարաբերութիւններուն :

Յօլ. 19.— Արդար եւ համերաշխ գործակցութիւն եւ շահակցութիւն զբաժառուի եւ աշխատութեան միջեւ, հաշտարար տաեաններու միջոցաւ :

Յօլ. 20.— Պետական վերհսկողութիւն աշխատանքի ժամերու, վարձատրութեան չափի, գործալայլերու առողջապահական պայմաններու եւ կանանց ու անչափահաններու աշխատութեան պայմաններուն վրայ :

Յօլ. 21.— Հաստատում պետական զբանեականերու (պիւրօ)՝ իբրեւ միջնորդ գործատիրոջ եւ գործաւորի միջեւ, անդործներու աշխատանք հայթայթելու համար :

Յօլ. 22.— Պետական պահովագրութիւն՝ պաշտպանելու համար ամէն կարգի աշխատաւորները ընդդէմ անդործութեան, հի-

ւանդութեան, արկածի, ծերութեան եւ մասուան :

Նոյնպէս՝ ապահովագրութիւն ընդդէմ բնական պատահարներու, ինչպէս՝ երաշտ, հեղեղ, կարկուտ, եւայլն :

Յօլ. 23.— Օրէնսդրական մասնաւոր միջոցներով քաջալերել եւ պաշտպանել երկրագործութիւնը եւ առանցն ճարտարարուեսար :

Յօլ. 24.— Պետութեան կը պատկանի հանքերու, անտառներու, ջուրերու եւ ուրիշնական հարատութիւններու արդիւնագործումը :

Կառավարութիւնը կրնայ՝ իր վերհսկողութեան տակ՝ անոնց չափագործումը տալ անհամառներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար :

Յօլ. 25.— Պետականացում թղթատարութեան, հեռագրի, հեռախոսի, երկաթուղային եւ փոխագրական միջոցներուն, ջրանցքներու եւ ելեկտրակայաններու :

Յօլ. 26.— Քաղաքապետութեան կը պատկանի հանքակառքերու, լոյսի եւ ջուրի մասակարարութիւնը :

Քաղաքապետութիւնը կրնայ անոնց մենաշնորհը տալ անհամառներու կամ ընկերութեանց, որոշ ժամանակաշրջանի համար :

Յօլ. 27.— Քաջալերում արտադրական եւ սպառողական համագործակցական (cooperative) ընկերութիւններու կազմակերպումին եւ ծաւալման :

Յօդ. 28. — Արդար բաշխում պետական տուրքերու, որպէս զի չջլատուին անհատական ու ընկերակական ձեռներէցութիւնը եւ երկրին արդիւնաբերական ու առեւտրական գործունէ-ութիւնը :

Յօդ. 29. — Յառաջատուական տուրք ե-կամուտի եւ ժառանգութեան վրայ, իսկ համեմատական միօրինակ տուրք՝ հողի եւ կալուածի արժէքին վրայ :

Յօդ. 30. — Աստիճանական ջնջում անուղղակի տուրքերու :

### Գլուխ Դ

#### Հողային Հարց

Յօդ. 31. — Հողին անհատական սեփականատիրութիւնը կը սահմանաւորուի Խորհրդարանին կողմէ քուէարկուած հողային օրէնքներու համաձայն :

Յօդ. 32. — Հողային սեփականատիրութեան իրաւունքը կը պայմանաւորուի եւ կը սահմանափակուի հողին մշակութեամբ եւ արդիւնագործութեամբ :

Պետութիւնը կրնայ երկրի արդիւնաբերական զարգացման համար ընկերութիւններու և անհատներու տալ որոշ չափէն առկի հողեր :

Յօդ. 33. — Հողալուրկ եւ սակաւահող գիւղացիներու ձրիաբար հող կը տրուի պետական տնօրինութեամբ, հողային ընդհանուր օրէնքի համաձայն :

Յօդ. 34. — Հողային բաշխուման չափանիւցը (նօրմա) կ'որոշուի տեղական պայմաններու, հողին որակին եւ աշխատութեան չափին համեմատ :

Յօդ. 35. — Պետութիւնը իրաւունք ունի դրաւելու անհատներու եւ ընկերութիւններու սեփական այն հողերը եւ անշարժ ստացուածքները, որոնք անհրաժեշտ են հանրօգուտ նպատակներու համար, արդար հատուցում ընկելով անոնց տէրերուն :

Յօդ. 36. — Գիւղերու համար սահմանել հասարակաց գործածութեան յատուկ արօտատեղիներ եւ անտառներ, եւ ապահովել անոնց անձեռնմխելիութիւնը :

Յօդ. 37. — Հողային օրէնքները կը դործադրութիւն աստիճանաբար բնակչութեան թիւալիստին աստիճանանարար եւ տեղական էին, մշակման պահանջներուն եւ տեղական պայմաններուն համեմատ :

### Գլուխ Ե

#### Կրթութիւն եւ Մշակոյք

Յօդ. 38. — Մղում տալ ժողովուրդի գարգացման եւ անոր ինքնատիպ մշակոյթին, դըպ-ըոցներու, համալսարաններու, լսարաններու, հանրային ձրի գասախօսութիւններու եւ գրադարաններու հաստատումով :

Յօդ. 39. — Հաստատու վարժապետանոցներ, երկրագործական եւ արհեստագիտական վարժարաններ :

Յօդ. 40. — Պաշտպանել եւ քաջալերել գեղարսեհսաները:

Յօդ. 41. — Փնտուել, հաւաքել եւ պահել հայկական ամէն կարգի հնութիւնները:

Յօդ. 42. — Քաջալերել գիտական խոռոշարկութիւնները:

Վերաբննութիւն

Ներկայ Ծրագիրը վերաքննելի է Կուսակցութեան Ընդհանուր Պատգամաւորական ժողովին կողմէ՝ Հիմնական կանոնադրի ուրամագրութեան համաձայն:

ՀԵՄՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈԱՄԿԱՆԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Ուսմկալար Ազատական Կուսակցութեան կաղմակերպական բաժանումներն են՝

Ա. Տեղական Ակումբներ եւ իրենց Վարչութիւնները.

Բ. Ծրջանակներ եւ Ծրջանային Վարչութիւններ.

Գ. Ծրջանային Պատգամաւորական Ժողովներ.

Դ. Կեղուոնական Վարչութիւն.

Ե. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդուած. 1. — Խրաֆանչիւր շրջանակ ինքնավար է ներկայ կանոնագրով ճշտուած իրաւասութիւններու սահմանին մէջ. ունի տեղական պայմաններու յարմարցուած ներքին կանոնագիր մը, որ Հիմնական կէտերու մէջ կը համաձայնի այս կանոնագրի տրամադրութիւններուն:

Յօդ. 2. — Կուսակցութեան բոլոր պաշտօնական մարմինները, Ակումբէն մինչեւ Ընդհանուր Պատգամաւորական ժողով, պէտք է պահէն իրենց որոշումներուն եւ յարաբերութեանց արձանագրութիւնները, դիւանէն ստորագըրուած:

Յօդ. 3. — Պաշտօնական մարմիններու գիւտանները աւանդապահն են Կուսակցութեան

տոմարներուն, թղթակցութիւններուն, պայտմանագրութիւններուն եւ կնիքին:

Յօդ. 4.— Բոլոր վարչական մարմիններուն եւ դիւնաններուն ընտրութիւնը կը կատարուի գաղտնի քուէարկութեամբ:

Անդամները վերընտրելի են, երբ օրինական արգելք չկայ:

Յօդ. 5.— Ընտրութիւններուն ատեն մէնչեւ վերջնթեր ամիսը իր անդամատուրքը առանց բանաւոր պատճառի չվճարող անդամ մը ընտրող եւ ընտրելի ըլլալու իրաւունք չունի:

Յօդ. 6.— Ընտրութիւններուն հիմք կը ծառայէ անդամներուն ամբողջական թիւը, զանց չառնելով չվճարողները, որոնց անունները օրինաւորապէս դուրս ձգուած չեն անուանացուցակէն:

Յօդ. 7.— Անվաստահութեան քուէնները եւ կախակայման որոշումները ոե՛ւէ մարմնի անդամներուն ամբողջութեան թիւին մէծամասնութեամբ միայն կը տրուին, իսկ արտաքսումի վերաբերեալ դատական վճիռները, երեք չորրորդին քուէով:

Յօդ. 8.— Կուսակցութիւնը իր սովորական պիտանէն զատ, պէտք է ունենայ իր հիմնադրամը, որմէ գոյացած տոկոսին եւ ի հարկին մայրգումարին գործածութիւնը կ'որոշուի Ընդհանուր Պատգամաւորական ժողովին կողմէ:

Յօդ. 9.— Կուսակցութեան բոլոր պատասխանատու մարմինները կը ստորագրեն երդմնա-

գիր մը, որուն բանաձեւը կը խմբագրուի Բնդդ-հանուր Պատգամաւորական ժողովին կողմէ:

Գլուխ Ա.

Անդամագրութիւն

Յօդ. 10.— Ռամկավար Աղասական կուսակցութեան կրնայ անդամակցիլ, առանց սեռի խտրութեան, 18 տարեկանէն վեր ամէն Հայ, որ կ'ընդունի այս կուսակցութեան սկզբունքները:

Յօդ. 11.— Նոր անդամ կ'ընդունուի Ակումբի Վարչութեան ժողովին մէծամասնութեան որոշումով, համաձայն այդ մասին շըրջանակի ներքին Կանոնագրի տրամադրութեան:

Բնդունուած անդամը պտք է ստորագրէ խոստմագիր մը:

Յօդ. 12.— Իւրաքանչիւր անդամ կ'ունենայ Շրջանային Վարչութենէն պատրաստուած անդամաքարտ մը, իր լուսանկարը կորող:

Յօդ. 13.— Իւրաքանչիւր անդամ բարոյական պարտաւորութեան տակ կը գտնուի ընկերական համակրանքի եւ սիրոյ վերաբերումց տալու կուսակցութեան բոլոր անդամներուն հանդէպահ: Այս պարտաւորութեան հակառակ վերաբերունք եւ ուրիշ անդամներու հանդէպահ վարկաբեկող վարմունքը պատասխանագութեան կ'ենթարկեն անդամ մը:

Յօդ. 14.— Կուսակցութեան անդամ չեն բնդունուիր անոնք, որ Ա. Ուրիշ Հայ քաղաքական կուսակցութեան մը անդամ են. Բ. Ոճիկան

բով եւ զեղծումով գտապարտուած են. 9.  
Ծանօթ են իրը յոտի նկարալի տէր անձեր :

Յօդ. 15.— Կուսակցութեան այլ անդամ-  
ները կը վճարեն տարեկան անդամասուրք մը,  
որուն նուազագոյն քանակը կ'որոշաւի շվանա-  
կին Պատգամաւորական ժողովին կողմէ, եւ կը  
յատկացուի մասամբ Շրջանակին եւ մասամբ  
ալ կեդրոնական սնտուկին :

Տեղական ծափերու հայթայթման համար  
Շրջանակիներու կանոնադիրները կ'ունենան ան-  
հրաժեշտ տրամադրութիւնները :

Կիներէ և ուսանողներէ կազմուած Ակումբ-  
ները իրենք կ'որոշեն անդամասուրքի քանակը,  
եւ կը մատակարարեն այս յօդուածի տրամա-  
դրութիւններուն համաձայն :

Յօդ. 16.— Նոր անդամները, Յօդ. 15-րդի  
մէջ յիշուած անդամասուրքին զատ, պարտին  
վճարել նաև մուտքի տուրք մը, որուն քանակը  
իրենք կ'որոշեն :

Յօդ. 17.— Անդամասուրքէ զերծ են այն  
անդամները, որոնց նիւթական վեճակին թույ-  
լատու չըլլալը կը հաստատուի իրենց Ակում-  
բին Վարչութեան կողմէ :

Յօդ. 18.— Բնակութեան հետեւանքով ան-  
դամ մը իր պատկանած Ակումբէն կրնայ ուրիշ  
Ակումբ մը փոխադրուիլ, Վարչութեան գրաւոր  
յանձնարարականով :

Յօդ. 19.— Իւրաքանչիւր անդամ միայն  
մէկ Ակումբի կրնայ անդամակցիլ եւ միայն մէկ  
ձայնի իւրաւունք ունի :

Յօդ. 20.— Ամէն անդամ պարտի յարգել  
կարգապահութեան օրէնքները :

Յօդ. 21.— Ուեւէ անդամ որ չի հնազան-  
դիր իր Ակումբին որոշումներուն, կամ չի վճա-  
րեր իր տուրքերը եւ կամ կ'ունակուէ Կուսակ-  
ցութեան օրէնքները, ազգարարութիւն կը ստա-  
նայ, եւ եթէ ազգարարութիւնը ապարդին  
մնայ, պատժոյ կ'հնթարկուի Շրջանակին ներ-  
քին կանոնադրին տրամադրութեանց համա-  
ձարին :

Յօդ. 22.— Ուեւէ անդամ մը որ  
Ա. Կուսակցութեան սկզբունքներուն դէմ  
կը գործէ .

Բ. Կարգապահութեան օրէնքները չի յար-  
դեր .

Գ. Իւրեն դէմ տրուած վճիռի մը դէմ ներ-  
քին օրինական միջոցներէ տարբեր միջոցներու  
կը գործէ .

Դ. Ուրիշ Հայ կուսակցութեան մը եւս  
կ'անդամակցի .

Իր Ակումբին անդամական ժողովին վճի-  
ռով կը կախակայտի եւ կը կորսնցնէ իր անդա-  
մական իրաւունքները, որոշուած ժամանակի  
մը համար, եւ ի հարկին կ'արտաքսուի՝ յետ  
դատավարութեան :

Յօդ. 23.— Ուեւէ անդամ որ Կուսակցու-  
թեան մէկ ուրիշ անդամը հրապարակով կը  
զրաբարտէ, զրապարատած անդամին դիմումին  
վրայ յետ քննութեան կը պատժուի, յարմար  
աեսնուած պատիժով մը, որ կրնայ ըլլալ մին-

չեւ կախակայում եւ արտաքսում, ըստ աստի-  
ճանի:

Յօդ. 24. — Ոճիրով եւ զեղծումով դատա-  
պարտուած անդամ մը կ'արտաքսուի Կուսակ-  
ցութենէն իր Ակումբին վճիռով:

Յօդ. 25. — Արտաքսուած անդամի մը ա-  
նունը կը հաղորդուի Կուսակցութեան բոլոր Ա-  
կումբներուն՝ գերադաս մարմիններուն միջո-  
ցաւ:

Յօդ. 26. — Տրուած վճիռէ մը գժղոհ ո՛եւէ  
կողմ կրնայ Ակումբին անմիջական գերադաս  
մարմինն բողոքել, վճովն թուականէն մինչեւ  
մէկ ամիս:

Յօդ. 27. — Բոլոր պատասխանատու մար-  
մինները, սկսեալ Ակումբի Վարչութիւններէն  
մինչեւ կեդր. Վարչութիւնը, պարտաւոր ևն  
ներկայ Կանոնագրի արամագրութիւններուն  
հակառակ գործով կամ թերացով անհատ ան-  
դամներու եւ իրենցմէ ստորագաս մարմիններու  
հանդէպ անմիջական աղղու տնօրինութիւններ  
ընել: Այս մասին զանցառութիւնը ծանր պա-  
տասխանատուութիւն կը հրաւիրէ վերոյիշեալ  
իրաւասու մարմիններուն վրայ, կուսակցական  
կարգապահութեան եւ կուսակցական վերին  
շահերուն դէմ մեղանչում մը նկատուելով:

Գլուխ Բ

Ակումբներ

Յօդ. 28. — Նուազագոյն հինդ անդամներու  
իմբաւումը կը կազմէ Ակումբ մը:

16

Յօդ. 29. — Նորակազմ Ակումբի մը գոյու-  
թիւնը օրինաւոր կը ճանչցուի այն ատեն միայն,  
երբ իր կազմութիւնը կը վաւերացուի Շրջա-  
նային Վարչութեան կողմէ:

Յօդ. 30. — Տեղական պարմաններու համե-  
մատ, կիները կրնան առանձին Ակումբներ  
ունենալ, առանձին Վարչութիւնով:

Յօդ. 31. — Իրաքանչիւր Ակումբ կ'ունե-  
նայ Յ— անդամներէ բաղկացեալ Վարչութիւն  
մը, որ կը պաշտօնավարէ մէկ տարի եւ մինչեւ  
իր յաջորդին ընտրութիւնը:

Ծանօթ. — Ցիսունէն վել անդամ ունեցող  
Ակումբները իրենց Վարչութենէն զատ կրնան  
ունենալ նաեւ տասնեակներու բաժանում մը,  
իրաքանչիւր տասնեակի պետը կը նշանակուի  
Վարչութենէն, եւ իր պաշտօնն է իր տասնեակի  
տուրքերը զանձել եւ հոգ տանիլ որ անդամա-  
կան ժողովներու յաճախեն:

Յօդ. 32. — Ակումբի մը Վարչութեն  
պահած անդամներուն յաջորդները ընտրելու  
իրաւունքը կը պատկանի անդամական ժողո-  
վին:

Յօդ. 33. — Թէ՛ Ակումբի Վարչութեան եւ  
թէ անդամական ժողովին որոշումները կը  
տրուին ձայներու մեծամասնութեամբ:

Յօդ. 34. — Ակումբի Վարչութիւնը կը վա-  
րէ Ակումբին գործերը եւ կը գործադրէ իր գե-  
րադաս մարմինն որոշումներն ու հրահանդին-  
ութեան ժողովներու մասնութեամբ:

Յօդ. 35. — Ակումբի Վարչութիւնը համա-

17



րասուր է թէ՛ անդամական ժողովին եւ թէ իր  
գերազաս մարմնին :

Յօլ. 36. — Ակումբի Վարչութիւնը պար-  
տաւոր է կանոնաւորապէս եռամսեայ տեղե-  
կալիքով իր գերազաս մարմինը իրազեկ պահել  
Ակումբին անդամներուն թիւին, ելմտական  
կացութեան եւ ընդհանուր գործունէութեան  
մասին :

Այս կանոնաւոր տեղեկազիրներէն զատ՝  
Ակումբներու Վարչութիւնները պարտաւոր են  
նաև իրենց գերազաս մարմինը տեղեակ պա-  
հանմիջական տեղեկազիրներով, այնպիսի  
խնդիրներու մասին, որոնց ծանօթութիւնը կա-  
րեւոր եւ օդտակար է Կուսակցութեան համար :

#### Գլուխ Գ

#### Անդամական Ժողով

Յօլ. 37. — Առնուադն ամիսը մէկ անդամ  
տեղի կ'ունենայ անդամական կանոնաւոր ժո-  
ղով, որուն հրաւէրը զրաւորապէս կամ մա-  
մուլի միջոցաւ կը հազորդուի բոլոր անդամնե-  
րուն, ժողովէն առնուադն երեք օր առաջ :

Յօլ. 38. — Ակումբի մը անդամական ժո-  
ղովը օրինաւոր է երբ անդամներուն կիսէն մէկ  
աւելին ներկայ է :

Յօլ. 39. — Երբ առաջին հրաւէրով ժողովը  
մէծամասնութիւն չունենայ, Վարչութիւնը  
կրնայ նոյն ամսուան մէջ երկրորդ հրաւէր մը  
ուղղել նոյն օրակարգով: Երկրորդ ժողովին  
ներկաներուն թիւը օրինական կը նկատուի եւ

տրուած որոշումները պարտաւորիչ են բոլոր  
անդամներուն համար:

Յօլ. 40. — Վարչութիւն Ատենապետը, իր  
բացակայութեան՝ Փոխ-Ատենապետը, անդամ-  
ներու մէկ երրորդի գլուխութիւն վրայ՝ պարտա-  
ւոր է արտասովոր նիստի հրաւէրել անդամա-  
կան ժողով:

Յօլ. 41. — Ակումբի տարեկան ժողովը կը  
գումարուի Շրջանակի Պատգամաւորական ժո-  
ղովին գումարման թուականէն առնուազն մէկ  
ամիս առաջ:

Յօլ. 42. — Ակումբի Վարչութիւնը տարե-  
կան ժողովին մէջ կը կատարէ Ակումբի մէկ  
տարուան համարատուութիւնը, որ կը տեղե-  
կագրուի Շրջանակի Պատգամաւոր ժողովին:

Յօլ. 43. — Ակումբի տարեկան ժողովին  
մէջ կ'ընտրուին Շրջանակի Պատգամաւորական  
ժողովը պատուիրակները, Ներքին Կանո-  
նագրի արամագրութեանց համաձայն:

Յօլ. 44. — Կանանց Ակումբները, եթէ  
հարկ համարեն, կրնան տեղւոյն Ալբերու Ա-  
կումբին հետ խառն ժողով գումարել եւ միա-  
սին բնարել իրենց պատուիրակները:

Յօլ. 45. — Ակումբի մը մէջ ծագած ո՛ւեէ  
վէճ, երբ իր լուծումը չի դանել տեղին վրայ,  
անմիջական գերազաս մարմինը կը միջամտէ  
եւ իր վճիռը պարտաւորիչ է բոլոր կողմէրուն  
համար, մինչեւ Շրջանային Պատգամաւորա-  
կան ժողովը, ուր, կատարուած դիմումի մը  
վրայ, վճիռը կը քննուի:

Յօդ. 46.— Իր գերազաս մարմնին որո՛-  
շումներուն եւ կարգադրութեանց դէմ անսաս-  
տող Ակումբի Վարչութիւն կը հրաժարեցուի  
նոյն գերազաս մարմնի կողմէ : Հրաժարեցու-  
ցեալ Վարչութեան անդամները վերընտրելի  
չեն :

Յօդ. — Ակումբ մը լուծուած կը համա-  
րուի , երբ իր անդամներուն թիւը որոշուած  
նուազագոյն թիւէն պակաս է :

Յօդ. 48.— Ակումբի մը լուծման պարա-  
գային , իր գոյքերը կը յանձնուին իր անմիջա-  
կան գերազաս մարմնին :

### Գլուխ Դ

#### Ծրջանակներ

Յօդ. 49.— Կուսակցութիւնը կը բաժնուի  
շրջանակներու՝ աշխարհագրական կամ վար-  
չական յարմարութիւններու համեմատ :

Յօդ. 50.— Ծրջանակ մը կը կազմուի մէկ  
կամ աւելի Ակումբներէ , պայմանաւ որ առ-  
նուազն 100 անդամ ունենայ եւ վաւերացուի  
կերպ . Վարչութեան կողմէ :

Յօդ. 51.— Իւրաքանչիւր Ծրջանակ տարին  
անդամ մը կ'ունենայ Ծրջանային Պատգամա-  
ւորական Ժողով , որ կը կազմուի Ակումբներու  
պատուիրակներէն , որոնց համեմատական թիւը  
կ'որոշուի իւրաքանչիւր Ծրջանակի ներքին կա-  
նոնագրութեան համաձայն :

Յօդ. 52.— Ծրջանային Պատգամաւորա-  
կան Ժողովին պատուիրակ կ'ընտրուին անոնք

միայն , որոնք առնուազն մէկ տարի անդամ  
եղած են Կուսակցութեան : Նորակազմ Ակումբ-  
ները բացառութիւն կը կազմէն :

Յօդ. 53.— Ծրջանային Պատգամաւորա-  
կան Ժողովը կը պատրաստէ նոյն Ծրջանակին  
Կանոնագիրը , որ պէտք չէ հակասէ Կուսակցու-  
թեան սկզբունքներուն եւ հիմնական Կանո-  
նագրին , եւ որ պէտք է վաւերացուի Կեդրոնա-  
կան Վարչութենէն :

Յօդ. 54.— Ծրջանային Պատգամաւորա-  
կան Ժողովը կը զբաղի Ծրջանակին վերաբե-  
րեալ խնդիրներով , կը սահմանէ տարեկան  
պիւտձէն և կ'ընտրէ Ծրջանային Վարչութիւնը :

Յօդ. 55.— Իւրաքանչիւր Ծրջանակ Կու-  
սակցութեան կեդրոնական գանձին կը վճարէ  
տարեկան տուրք մը , որուն քանակը կ'որոշուի  
Բնուդն . Պատգ. Ժողովին կողմէ , հիմնուած Ծրը-  
ջանակին կացութեան եւ նոյն Ծրջանակի պատ-  
գամաւորներու տեղեկատուութեան վրայ :

Յօդ. 56.— Ծրջանային Վարչութիւնը կը  
բաղկանայ առ նուազն հինգ անդամներէ ,  
կ'ընտրուի մէկ տարուան համար եւ կը պաշ-  
տօնավարէ մինչեւ յաջորդին ընտրութիւնը :

Յօդ. 57.— Ծրջանային Վարչութեան ան-  
դամ կ'ընտրուին անոնք միայն , որոնք առ  
նուազն երկու տարի անդամ եղած են Կուսակ-  
ցութեան :

Յօդ. 58.— Ծրջանային Վարչութիւնը կ'ըն-  
դումի եւ կը գործադրէ Կեդր . Վարչութեան  
հրահանգները եւ Ծրջանային Պատգմ . Ժողովի

որոշումները . կրնայ ի հարկին թղթակցիւ ժիւս  
Շրջանային Վարչութիւններուն հետ , տեղական  
բնոյթ կրող կազմակերպարկան եւ այլ հասա-  
րակական հարցերու չուրջ :

Յօդ . 59.— Շրջանային Վարչութիւնը պա-  
տասխանատու է իր Շրջանակի Պատգմ . Ժողո-  
վին , որուն պարագի ներկայացնել իր տարե-  
կան տեղեկագիրը եւ հաշիւը :

Յօդ . 60.— Շրջանային Վարչութիւնը երեք  
ամիսը անդամ մը պարտաւոր է զրկել Կեդր .  
Վարչութեան՝ իր ըրջանին վիճակագրական ,  
եւ բարոյական եւ բարոյական տեղեկագիրը :  
Ասկէ զատ , Շրջանային Վարչութիւնը յաձա-  
խարկի թղթակցութիւն կը կատարէ Կեդր .  
Վարչութեան հետ :

Յօդ . 61.— Շրջանակին շարժուն եւ ան-  
շարժ ստացուածքները մատակարարելու վե-  
րին իրաւասութիւնը կը պատկանի Շրջանային  
Վարչութեան :

Յօդ . 62.— Շրջանային Վարչութեան հըս-  
կողութեան եւ պատասխանատուութեան տակ  
կը հրատարակուի Շրջանակին պաշտօնաթեր-  
թը , որուն խմբագրին ընտրութիւնը կ'ենթար-  
կուի Կեդր . Վարչութեան վաւերացումին :

Յօդ . 63.— Շրջանակիները , ըստ տեղական  
պայմաններու , կրնան ունենալ մէկ կամ աւելի  
ենթաշրջանակիներ՝ համապատասխան Վար-  
չութիւններով , որոնք կը վարեն Ենթաշրջանա-  
կին վերաբերեալ ընդհանուր գործերը եւ պա-  
տասխանատու են Շրջանային Վարչութեան :

Յօդ . 64.— Շրջանային Վարչութիւնը  
ովէտք է նախասդէս Կեդր . Վարչութեան հաւա-  
նութիւնը ստանայ այն բոլոր ձեռնարկներուն  
համար , որոնք կուսակցութեան ընդհանուր  
քաղաքականութեան հետ կազ ունին եւ որոնք  
տեղական հանդամանք չունին :

Յօդ . 65.— Շրջանային Վարչութիւնը  
ողարտի Կեդր . Վարչութեան վաւերացման են-  
թարկել իր տարեկան պիւտածէն , եւ պիւտածէին  
մէջ չկանխատեսուած այն ձեռնարկներն ու  
ծախքերը , որոնք կրնան մեծապէս խանդարել  
պիւտածէին հաւասարակշուութիւնը :

### ԳԼՈՒԽ Ե

Ընդհանուր Պատգամատրական Ժողով

Յօդ . 66.— Բնդէ . Պատգմ . Ժողովը Կու-  
սակցութեան Գերագոյն , Օրէնսդիր եւ Համա-  
րառու մարմինն է :

Յօդ . 67.— Բնդէ . Պատգմ . Ժողովը կը  
կազմուի Կուսակցութեան բոլոր Շրջանակներէն .  
ընտրուած պատգամաւորներէն :

Յօդ . 68.— Կուսակցութեան իրաքանչիւր  
Շրջանակը իրաւունք ունի նշանակելու պատ-  
գամաւոր մը , ասկէ զատ Շրջանակները պատ-  
գամաւոր կը զրկեն նաև հետեւեալ համեմա-  
տութեամբ :

100 — 250 անգամ 1 պատգամաւոր

\* 250 — 500 > 2 >

501 — 750 > 3 >

\* 751 — 1000 > 4 >

1001 — 1500 » 5 »  
1501 — 2000 » 6 »

Եւ այսպիս իւրաքանչիւր յաւելուածական հինգ  
հարիւր կամ նուազ անդամի համար մէկ պատ-  
գամաւոր աւելի :

Յօդ. 69.— Նորակաղմ Ակումբ մը որ իր  
աշխարհագրական դիրքին բերմամբ չի կրնար  
կապուիլ ուրիշ ըրջանակի մը, կը մասնակցի  
Ընդհ. Պատգմ. Ժողովին իր առանձին Շըր-  
ջանակ, պայմանաւոր ունենայ առ նուազն 25  
անդամ, երբ այդ մասնակցութիւնը զուգագի-  
պի իր կազմութեան առաջին տարիին, եւ առ  
նուազն 50 անդամ, երբ իր կազմութենէն ի վեր  
անցած են մէկէ աւելի տարիներ :

Յօդ. 70.— Պատգամաւորներու ընտրու-  
թիւնը կը կատարուի Շրջանային Պատգմ.  
Ժողովներու կողմէ՝ նոյն ժողովին համար  
ընտրուած պատուիրակներուն թիւին մեծա-  
մասնութեամբ :

Այն պարագային որ Շրջանային Պատգմ.  
Ժողովներու կողմէ ընտրուած պատգամաւոր-  
ներն ու փոխ-պատգամաւորները չկարենան  
մասնակցիլ Ընդհ. Պատգմ. Ժողովին, Շրջա-  
նային Վարչութիւնները եռապատիկ ցանկով  
պատգամաւորական թեկնածուներ կը ներկա-  
յացնեն Ակումբներու անդամական ժողովներու  
քուէարկութեան :

Մէկ Ակումբով ներկայացուած Շրջանակ  
մը Ընդհ. Պատգմ. Ժողովին պատգամաւոր  
կընտրէ իր անդամական ժողովին մէջ :

Յօդ. 71.— Բնդհ. Պատգմ. Ժողովը կը  
գումարուի երեք տարիին անդամ մը կեղր.  
Վարչութեան կողմէ նշանակուած վայրին մէջ :

Յօդ. 72.— Արտասովոր Ընդհ. Պատգմ.  
Ժողովը կը գումարուի

Ա. Երբ կեղր. Վարչութիւնը պէտք տեսնէ,  
իր անդամներու մեծամասնութեան քուէով :  
Այս պարագային՝ հրաւիրագիրը պէտք է կրէ  
կեղր. Վարչութեան անդամներու երկու եր-  
րորդին ստորագրութիւնը :

Բ. Երբ կուսակցութեան բոլոր Շրջանակ-  
ներու երկու երրորդը գրաւորագիս կը պա-  
հանջէ, միեւնոյն առաջարկով :

Գ. Երբ կեղր. Վարչութիւնը կը կորսնցնէ  
իր մեծամասնութիւնը :

Արտասովոր Ընդհ. Պատգմ. Ժողովը իր  
մասնաւոր նպատակը իրագործելէ յետոյ, կըր-  
նայ ուրիշ խնդիրներով ալ զբաղիլ, պատգա-  
մաւորներու մեծամասնութեան հաւանու-  
թեամբ :

Յօդ. 73.— Կեղր. Վարչութիւնը պարտա-  
ւոր է հրաւիրագիր զրկել, խնդիրներու ցան-  
կով միասին, բոլոր Շրջանակներուն, Ընդհ.  
Պատգմ. Ժողովի գումարման թուականէն չորս  
ամիս առաջ :

Օրակարգին պիտի ընկերանայ Շրջանակ-  
ներու նիւթական, բարոյական եւ վիճակագրա-  
կան տեղեկութիւնը սահմանաւորող հարցա-  
րան մը, որուն պատասխանը Շրջանային Վար-  
չութիւնները պարտաւոր են Ընդհ. Պատգմ.

Ժողովի գումարումն մէկ ամիս առաջը՝  
նել կեզր . Վարչութեան :

Յօդ. 74.— Իւրաքանչիւր Շրջանակի պատ-  
գամաւոր կ'ընտրէ իր Շրջանակի անդամներէն  
եւ կամ ի հարկին ուրիշ Շրջանակի պատկանող  
ընկերներէն , պայմանաւ որ ընտրելիութեան  
հանդամնքը ներկայացնեն :

Յօդ. 75.— Կեզր . Վարչութեան անդամներն  
եւս կրնան պատգամաւոր ընտրութիւն Ընդհ .  
Պատգմ . Ժողովին համար , պայմանաւ որ ա-  
նոնք ձայն չունենան Վարչութեան համարա-  
տուութեան ատեն :

Յօդ. 76 . Իւրաքանչիւր պատգամաւոր  
կրնայ ներկայացնել մէկ ձայն :

Յօդ. 77.— Ընդհ . Պատգմ . Ժողովը օրու-  
կարգի անցնելէ առաջ

Ա . Կ'որոշէ իր ժողովարարական կանոն-  
ներն ու ժողովի տեւողութիւնը :

Բ . Կը զծէ Կուսակցութեան ներքին եւ ար-  
տաքին քաղաքականութիւնը , որոշելով գոր-  
ծելակերպի ընդհանուր զիծերը :

Գ . Կը պահանջէ , կը քննէ եւ կը վասե-  
րացնէ Կեզր . Վարչութեան , ինչպէս նաև Շրջ-  
անակներու տեղեկագիրներն ու հաջիւները :

Դ . Կը քննէ , կը գատէ ու կը պատժէ Կեզր .  
Վարչութեան ամբաստանեալ անդամները , եթէ  
կան :

Ե . Կ'ընտրէ Կեզր . Վարչութիւնը :

Զ . Կ'ընտրէ Կեզր . Վարչութեան համար  
երեք փոխանդամներ :

Է . Կը վերաքննէ Կեզր . Վարչութեան դա-  
տական վճիռները , եթէ բողոքարկու կողմը  
դրաւոքապէս ներկայացնէ իր բողոքը :

Բ . Կը քուէարկէ Կուսակցութեան պիւտ-  
աէն եւ կ'որոշէ Շրջանակներու մասնակցու-  
թեան չափը :

Թ . Կը վերաքննէ ի հարկին ծրագիրը եւ  
Հիմնական Կանոնագիրը :

Յօդ. 78.— Ընդհ . Պատգմ . Ժողովը օրի-  
նաւոր է , երբ Շրջանակներու երկու երսրդը  
ներկայացուած է եւ ըստ Յօդ. 68-ի տրամադ-  
րութեան՝ ընտրուելիք պատգամաւորներու  
ամբողջական թիւին կէսէն մէկ աւելին ներ-  
կայ է :

Յօդ. 79.— Ընդհ . Պատգմ . Ժողովին  
պատգամաւոր կ'ընտրուին անոնք միայն , ո-  
րոնք առ նուազն երկու տարի Կուսակցութեան  
անդամ եղած են :

Նորակազմ Շրջանակները բացառութիւն  
կը կազմէն :

Յօդ. 80.— Ընդհ . Պատգմ . Ժողովի որո-  
շումները կը տրուին ներկաներու մէծամաս-  
նութեամբ՝ ի բաց տուել հետեւեալ ինդիր-  
ները , որոնց համար անհրաժեշտ է վաւերա-  
ցուած պատգամաւորներու մէծամասնութեան  
քուէն .

Ա . Ծրագրի եւ Հիմնական Կանոնագրի  
փոփոխութիւն :

Բ . Կեզր . Վարչութեան ընտրութիւն :

Գ . Դատական վճիռներ :

Դ. Պիւտճէի քուէարկութիւն :

Ե. Ընդհ. քաղաքականութեան հարցեր :  
Յօդ. 81.— Ընդհ. Պատգմ. Ժողովի ատե-  
նագրութիւններու ամփոփումը տպագրուած կը  
դրկուի Շրջանակներու պատասխանատու մար-  
միններուն, Ակումբներում բաժնուելու համար :

### Գլուխ Զ

Կեդրոնական Վարչութիւն

Յօդ. 82.— Կեդր. Վարչութիւնը կ'ընտը-  
րուի Ընդհ. Պատգմ. Ժողովին, երեք տարուան  
համար, պատգամաւորներու բացարձակ մե-  
ծամասնութեամբ եւ կը պաշտօնավարէ մինչեւ  
յաջորդին ընտրութիւնը :

Յօդ. 83.— Կեդր. Վարչութեան անդամ-  
ները թէ անհատապէս եւ թէ հաւաքարար  
պատասխանատու են Ընդհ. Պատգմ. Ժողովին :

Յօդ. 84.— Կեդր. Վարչութիւնը կը բաղ-  
կանայ առ նուազի հինգ անդամներէ :

Երբ Կեդր. Վարչութեան անդամներէն մէկ  
կամ աւելին հրաժարին կամ պակսին, անոնց  
կը յաջորդին Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ  
ընտրուած փոխ-անդամները՝ առաւելագոյն  
քուէի կարգով :

Երբ հրաժարող կամ պակսած անդամը կամ  
անդամները վճարեալ են, Կեդր. Վարչութիւնը  
համապատասխան թիւով եռավատիկ ցանկ  
մը կը դրկէ Շրջանակին Վարչութիւններուն,  
քուէարկուելու համար :

Իւրաքանչիւր Շրջանակի վերջին Ընդհ.

Ժողովին մէջ ունեցած պատգամաւորներու  
թիւը հիմ կը կազմէ քուէարկութեան, եւ ա-  
ռաւելագոյնով կ'ընտրուվին թեկնածուները :

Եռապատիկ ցանկ կազմելու համար նա-  
խապատուութիւնն կը տրուի Վարչութեան ոչ-  
վճարեալ անդամներուն, երբ անոնք տրամա-  
դիր են վճարեալ գառնալու եւ իրենց ամբողջ  
ժամանակը յատկացնելու Վարչութեան գոր-  
ծերուն :

Յօդ. 85.— Կեդր. Վարչութեան անդա-  
մակցութեան թեկնածու են անոնք միայն, ո-  
րոնք առ նուազն երեք տարի կուսակցութեան  
անդամ եղած են :

Յօդ. 86.— Իւրաքանչիւր Ընդհ. Պատգմ.  
Ժողով կ'որոշէ յաջորդ շրջանի Կեդր. Վար-  
չութեան պաշտօնավայրը :

Յօդ. 87.— Կեդրոնական Վարչութիւնը  
ինք կ'ընտրէ իր գիւտանը :

Յօդ. 88.— Կեդր. Վարչութիւնը, երբ  
հարկ գատէ, կը նշանակէ միազօրներ, յանձնա-  
ժողովներ եւ կը վարձէ քարտուղարներ, գոր-  
ծիչներ եւ ուրիշ պաշտօնեաններ, իր որոշում-  
ները գործադրելու եւ կուսակցութեան ընդհա-  
նուր գործերուն ընթացք տալու համար :

Յօդ. 89.— Կեդր. Վարչութիւնը կը վե-  
րաքննէ Շրջանակի մը Պատգամաւորական Ժո-  
ղովին գատական վճիւնները, պայմանաւ որ  
բողոքարկուն գրաւորապէս ներկայացնէ իր  
բողոքը, տրուած թուականէն մինչեւ երեք ա-  
միս :

Յօլ. 90. — Կեդր. Վարչութեան հսկողութեան և պատասխանառութեան տակ կը հրատարակուին Կուսակցութեան կեդրուական պաշտօնական հրատարակութիւնները :

Յօլ. 91. — Կեդր. Վարչութեան պաշտօննէ :

Ա. Գործադրել Ընդհ. Պատգմ. Ժողովին կողմէ քուէարկուած օրէնքներն ու որոշումները, և վարել Կուսակցութեան ընդհանուր գործերը :

Բ. Կանոնաւոր յարաբերութեան մէջ ըլլալ ըսլոր Շրջանակներուն հետ և անոնց հրահանդ տալ Կուսակցութեան ներքին և արտաքին քաղաքականութեան նկատմամբ :

Գ. Տնօրինել ըրոբականտի միջոցներ՝ Կուսակցութեան սկզբունքները և քաղաքականութիւնը ընդհանրացնելու համար :

Դ. Ճշգել՝ ներշնչուելով Պատգմ. Ժողովի որոշումներէն և Կուսակցութեան հիմնական սկզբունքներէն՝ Կուսակցութեան տեսակէան ու դիրքը հանդէս պետական հարցերու :

Ե. Առ նուազն միամսեայ ըլջաբերականներով Շրջանակները տեղեակ պահէլ Կուսակցութեան ընդհանուր գործունէութեան և պետական խնդիրներու չուրջ, իսկ եռամսեայ նիւթական տեղեակառութիւն մը ընել :

Զ. Թելադրութիւններ ներկայացնել Ընդհ. Պատգմ. Ժողովին, յաջորդ ըրջանի ընդհանուր պիտածէին համար :

Յօլ. 92. — Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի բժիշկանելու Շրջանային Վարչութիւններու որոշումները, երբ զանոնք Կուսակցութեան սկզբունքներուն հակառակ զանէ :

Յօլ. 93. — Կեդր. Վարչութիւնը իրաւասութիւն ունի լուծելու Շրջանային Վարչութիւն մը, երբ անոր ընթացքը, յետ ազգարարութեան, կը շարունակէ մնալ հակառակ Կուսակցութեան սկզբունքներուն և ընդհանուր քաղաքականութեան : Այդ պարագային Կեդր. Վարչութիւնը կը հրաւիրէ արտասովոր Շրջանային Պատգմ. Ժողով, որ կ'ընտրէ Նոր Շրջանային Վարչութիւն :

Լուծուած Շրջանային Վարչութեան անդամները վերընտրելի չեն :

Յօլ. 94. — Կեդր. Վարչութեան անդամներն ու ներկայացուցիչները իրաւասութիւն ունին իրենց գտնուած Շրջանակներու ըոլոր պաշտօնական մարմիններու նիստերուն մասնակցիլ խորհրդակցական ձայնով :

Յօլ. 95. — Կուսակցութեան սեփական շարժուն և անշարժ ստացուածքներու մատակարարութեան վերին իրաւասութիւնը կը պատկանի Կեդր. Վարչութեան :

Շրջանային Վարչութիւնները փոխանորդարար կը վայելին իրենց Շրջանակներուն սեփական շարժուն և անշարժ ստացուածքները մատակարարելու իրաւասութիւնը :

Յօլ. 96. — Կեդր. Վարչութեան անդամները պարտին ուխտել հաւատարմութիւն Կուս

սակցութեան սկզբունքներուն ու չահերուն, եւ  
ստորագրել երդմնագիր մը :

### Երդում


Հիմնական կանոնագրին «Կեղրոնական  
Վարչութիւն» հատուածի վերջին յօդուածի  
տրամադրութեան համեմատ, կեղը. Վարչու-  
թեան անդամները կ'երդնուն հետեւեալ բա-  
նաձեւով եւ անոր մէկ օրինակը կը ստորագրեն  
յատենի ժողովոյ :

### Երդմնագիր

«Ստանձնելով Ռամկավար Ազատական  
Կուսակցութեան կերպոնական Վարչութեան  
անդամակցութիւնը, կ'երդնում պատուոյս  
վրայ եւ հայրենիքիս անունով, հաւատարիմ  
մնալ Ռամկավար Ազատական Կուսակցութեան  
սկզբունքներուն. պահպանել եւ գործադրել  
անոր ծրագիրն ու կանոնագիրը, խղճմտօրէն  
կատարել Պատգամաւորական Ժողովին որո-  
շումները եւ իր կողմէ ինծի վստահուած պաշ-  
տոնը, աչալըջօրէն հակել Ռամկավար Ազատա-  
կան Կուսակցութեան չահերուն վրայ եւ ջա-  
նալ անոր քաղաքական նպատակներուն իրա-  
գործման, Հայ Ազգին եւ Հայրենիքին բարիքին  
համար» :

Վերաբենութիւն

Ներկայ Հիմնական կանոնագիրը վերա-  
գրննելի է Կուսակցութեան մնդհանուր Պատ-  
գամաւորական Ժողովին մէջ:



2013

«Ազգային գրադարան



7525

NL0040323

